

գրոյս» (կը շարունակուի Հ. Ա. մինչեւ սող 27):
 ... «կաթուղիկ եւ հերձուածող, ֆոէնկ եւ
 հայ աղճատանօք. թող որ աղճատին ի լեզուս
 այլազգեաց. եւ կատարածն ո՞վ գիտէ թէ ուր
 նկատելոց եւ դադարելոց, որոյ եղեւ առիթ
 Սարգիս ոմն Թօխաթցի. մէք զմեր ցաւն ու-
 նէաք, եւ արդ զսկիզբն երկանց կասկածեալ
 շուարեալ մնացաք. մէկն օրհնեց, մէկն անիծեց
 մէկ այլ եկաւ հաւատէն հանեց: Ով տեարք
 պատուականք, մի ըստ աչս դատէք, այլ ուղիղ
 դատաստան արարէք, ասէ Տէրն. ոմանցդ սի-
 բելեաց յայտնի է որ զժամանակս կենաց մերոց
 ընդ այլազգիս արամաբանութեամբ անցուցեալ
 եմ մինչեւ ցայսօր, ըստ մարդկութեան ասեմ:
 Զի ոչ եւս քննեմ զդաւանուքս նոցա այ-
 սօր, այլ գրգեմ թէ զինչ է եկեղեցւոյ մերում
 պակասութիւն եւ եկեղեցականաց եւ կարգաւո-
 րաց մերոց եւ հայրապետաց:»

Այս տեղ յիշուած «Սարգիս ոմն Թօ-
 խաթեցի», մեր Սարգիս Եպ.ն է, որ 1679—
 1690 միջոցներուն, եւ աւելի 1690ի մօտերը
 Պոլիս եկած է, քանի որ Երեմիա զինքն իբր
 անծանօթ մէկը կը յիշատակէ: Որպէս զի կա-
 րելի ըլլար Սարգսին՝ Պոլսոյ ժողովրդեան մէջ
 կրօնական երկու զատ մարմին կազմել, պէտք է
 ենթադրել՝ որ կաթողիկէ Հայերն այն ժամա-
 նակ բազմացած եւ զօրաւոր խումբ մը կազմած
 էին: Այս մասին կը պակսին ժամանակակից
 գրութիւններ: Ինչպէս Երեմիա Չէլէպիի յի-
 շեալ գրութիւններէն կը գուշակուի, այս նիւթի